ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՓՅՈՒՌՔԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՓԻՓԼ ՕՖ ԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք.Երևան «18» դեկտեմբերի 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը և «ՓԻՓԼ ՕՖ ԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ այսուհետ «ԿՈՂՄԵՐ».

կարևորելով

- Հայաստանում ֆիլմարդյունաբերության զարգացման միջոցով ֆիլմարտադրության զարգացումը,

- ոլորտի միջազգային փորձը և օտարերկրյա ֆիլմարտադրողների՝ Հայաստանում ֆիլմարտադրություն իրականացնելու կարևորությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը ջանքեր կգործադրեն համատեղ ֆիլմարտադրություն իրականացնելու և Հայաստանում ֆիլմարտադրությունը զարգացնելու ուղղությամբ:

Հոդված 2

Սույն Հուշագրի կողմեր հանդիսացող Հայաստանի Հանրապետության պետական մարմինները կաջակցեն Թիլ Շվայգերի «Underdog», «Dead by Dawn», «Collapse»/8մաս ֆիլմերի ներդրումների մասնակի վերադարձ (cash rebate) տրամադրելու գործընթացին՝ «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների համաձայն:

Հոդված 3

Ֆիլմի նկարահանման գործընթացին կներգրավվեն Հայաստանի ստեղծագործական բուհերի ուսանողներ՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս լինել փորձառու ֆիլմարտադրական հրապարակում, ձեռք բերել մասնագիտական հմտություններ և կարողություններ:

Հոդված 4

Կողմերը կնպաստեն ոլորտի մասնագետների ներգրավմանը՝ միջազգային կինոնախագծերի նկարահանումներին և կխթանեն միջազգային համբավ ունեցող մասնագետների հետ համագործակցությունը:

Հոդված 5

Կողմերի համագործակցությունը հնարավորություն կընձեռի ապահովելու Հայաստանի պատշաճ դիրքավորումը միջազգային կինոհարթակներում, այսուհետ նաև որպես ներդրումների մասնակի վերադարձի (cash rebate) համակարգ ունեցող երկիր, ինչը կխթանի օտարերկրյա կինոարտադրողների ներդրումներին հայաստանյան տնտեսության մեջ՝ նոր ներդրումներ ապահովելով ֆիլմարդյունաբերության ոլորտում:

Հոդված 6

Կողմերը կհամագործակցեն նաև ենթաօրենսդրական ակտերի մշակման և ոլորտում բարեփոխումների իրականացման ուղղություններով:

Հոդված 7

«ՓԻՓԼ ՕՖ ԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ համատեղ ջանքեր կգործադրեն միջազգային ֆիլմարտադրողներին Հայաստանի Հանրապետության տարածք հրավիրելու և իրենց տեսաձայնային արտադրանքը Հայաստանի տարածքում իրականացնելու ուղղությամբ:

Հոդված 8

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համապատասխան պարտականությունների կատարման ավարտը:
Սույն Հուշագիրը ստորագրվել է 2023 թ. դեկտեմբերի «18», ք. Երևանում, 4 (չորս) օրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և անգլերեն լեզուներով: Երկու տեքստերը հավասարազոր են:
Սույն Հուշագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում գերակայությունը կտրվի հայերեն լեզվով տեքստին:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՓՅՈՒՌՔԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՍԻՍԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՇՈՒՇԱՆԻԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

«ՓԻՓԼ ՕՖ ԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ԱՐՄԱՆ ՆՇԱՆՅԱՆ